

**ՀՀ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԹԵՄԱՆԵՐ**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

1. Մշակաբույսերի հինավուրց սորտերի առկայության ներկա իրավիճակի գնահատումը ֆերմերային և տնային տնտեսություններում, որպես գենետիկական ռեսուրսների, պարենային անվտանգության և կենսաբազմազանության աղբյուր,
2. Օրգանական գյուղատնտեսության սկզբունքների կիրառական հեռանկարները սերմնաբուծությունում,
3. Կլիմայական փոփոխությունների հանդեպ առավել կայուն սորտերի տարածվածության գնահատումը Հայաստանում,
4. Պարենային անվտանգության համատեքստում կենսական կարևորություն ունեցող սերմերի պահպանության համար նախատեսված գենետիկական բանկերի զարգացման և դրանց կայուն աշխատանքի համար անհրաժեշտ ֆինանսավորման ապահովումը,
5. Կենդանիների բրուցելոզ հիվանդության հարուցիչների տիպիզացիա (типизация),
6. Գիտական նվաճումների վրա հիմնված անվտանգ սննդի ապահովության իրազեկման ծրագրերի հզորացում,
7. Ճշգրիտ գյուղատնտեսության մեթոդների կիրառում խաղողագործության բնագավառում,
8. Խաղողի ֆիլոքսերա վնասատուի առկայության և տարածման ուսումնասիրում,
9. Խաղողի ֆիլոքսերադիմացկուն արմատակալների և հայկական խաղողի սորտերի համատեղելիության ուսումնասիրում,
10. Գյուղացիական տնտեսությունների զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում,
11. Պարենային անվտանգության հիմնախնդիրների լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում,
12. Ագրոարդյունաբերական համալիրի գործունեության արդյունավետության բարձրացման ինովացիոն տեխնոլոգիաների ներդրում,
13. Covid 19–ը և պարենային անվտանգությունը,
14. Գյուղատնտեսական արտադրանքի հարկման արդյունավետ համակարգի ներդրում,
15. Գյուղատնտեսության զարգացման միտումներն ու մարտահրավերները,

16. Ոռոգման ջրի որակի նորմերի մշակում,
17. Բարձր հարմարվողականությամբ օժտված բանջարաբուստանային մշակաբույսերի սորտերի առաջնային սերմնաբուծության կազմակերպում՝ կլիմայի փոփոխության պայմաններում գյուղացիական տնտեսությունների ռիսկերը մեղմելու և կայուն եկամուտներ ապահովելու համար,
18. Սելեկցիայի ավանդական և կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ բանջարաբուստանային մշակաբույսերի տեսակային և սորտային կազմի ընդլայնում, գենետիկական ռեսուրսների բազայի հարստացում և պահպանում,
19. Հայաստանում կանաչ գյուղատնտեսության խթանման նպատակով բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցման էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների մշակում և ներդրում,
20. Երկրում տեխնիկական մշակաբույսերից կենսավառելիքի ստացման համար ռեսուրսային, տեխնոլոգիական և ներդրումային հնարավորությունների գնահատում:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

1. Գերիզոր լազերների, դրանց առանձին հանգույցների, բաղադրամասերի մշակման և գործնական կիրառմանն առնչվող թեմաներ,
2. Գերբարձր հաճախականության գերիզոր սարքերի, գեներատորների, դրանց առանձին հանգույցների, բաղադրամասերի մշակման և գործնական կիրառմանն առնչվող թեմաներ,
3. Զրաժնային էներգետիկա,
4. Նանոտեխնոլոգիաներ և դրանց օգտագործմամբ կիրառական մշակումներ,
5. Արհեստական բանականություն,
6. Նեյրոտեխնոլոգիաներ և դրանց օգտագործմամբ կիրառական մշակումներ,
7. Քվանտային տեխնոլոգիաներ և դրանց օգտագործմամբ կիրառական մշակումներ,
8. Հրթիռային տեխնոլոգիաներ՝ հրթիռաշինություն, առանձին հանգույցների, բաղադրամասերի մշակման և գործնական կիրառմանն առնչվող թեմաներ,

9. Երկակի նշանակության տեխնոլոգիաների հետ կապված գիտահետազոտական և կիրառական թեմաներ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

1. Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով՝ կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման և ջրային ռեսուրսների օգտագործման արդյունքում առաջացող հոսքաջրերի, այլ նպատակներով օգտագործման տեխնոլոգիական լուծումների ներդրման հնարավորությունը ՀՀ-ում,
2. ՀՀ տարածքի մակերևույթային ջրերի մոդելավորման համակարգի ստեղծում,
3. Կլիմայի փոփոխության պայմաններում ՀՀ տարածքում հանդիպող վայրի կենդանիների միգրացվող տեսակների հարմարվողականության, միգրացիոն ուղիների, ապրելավայրերի, էկոլոգիական առանձնահատկությունների, տարածվածության ուսումնասիրություն,
4. Լայն կիրառում ունեցող բույսերի (դեղաբույսեր, ուտելի բույսեր) ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում,
5. Փոշու մանր բաղադրության (PM2.5 և PM10) պարունակությունը որոշելու մեթոդաբանության մշակում մթնոլորտ արտանետումների նորմավորման նպատակով,
6. Մարդու և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու նպատակով մթնոլորտ արտանետվող գարշահոտ նյութերից առաջացած հոտի ինտենսիվության հաշվարկի և մթնոլորտում դրա տարածման մոդելավորման ուսումնասիրություն,
7. Հայաստանի Հանրապետության անտառներում վերջին տարիներին նկատվող սոճիների զանգվածային չորացման պատճառների հայտնաբերմանն ուղղված հետազոտական աշխատանքներ,
8. Արդյունագործական օբյեկտ հանդիսացող հիդրոբիոտների պաշարների գնահատում՝ Սևանա լճում սիգի աճի տեմպի ուսումնասիրություն և Սևանի իշխանի ամառային ու գեղարքունի ենթատեսակների որսավերադարձի ուսումնասիրություն,

9. Կայուն օրգանական աղտոտիչներ (ժամկետանց թունաքիմիկատներ, պոլիքլորացված բիֆենիլներ, պերֆտորոկտանային սուլֆոնաթթու) պարունակող թափոնների վնասազերծման տեխնոլոգիաների ուսումնասիրում և դրանց կիրառման հնարավորությունը ՀՀ-ում,
10. Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող գետերում այդ ձկնատեսակների կենսապայմանների և ձվադրավայրերի ուսումնասիրություն,
11. Ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների ուսումնասիրություն և դրանց նորմատիվների մշակում,
12. Ագրոկլիմայական միկրոշրջանացման թվային մոդելի ստեղծում մշակաբույսերի աճի ու զարգացման նպաստավոր գոտիների քարտեզագրում՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխությունը,
13. Դենդրոկլիմայագիտական տվյալների ուսումնասիրություն՝ հաշվի առնելով կլիմայական փոփոխության ազդեցությունն անտառների վրա:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Էներգետիկայի բնագավառ

1. Հայաստանի հիդրոռեսուրսների արդյունավետ օգտագործումը խթանող միջոցառումներ
«Բաշխիչ ցանցերում էլեկտրաէներգիայի որակի գնահատումը կայունացված և անցումային ռեժիմներում՝ փոքր ՀԷԿ-երի և շարժիչային բեռերի առկայությամբ» ծրագիրը՝ ներկայացված «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ կողմից և «Ջրանցքներում ջրի հոսքի չափման մեթոդիկայի և իրականացման սարքվածքի կիրառությունը Սևանա լճից ջրառի և Արփա-Սևան թունելով դեպի լիճ ջրի մուտքի հաշվառման ընթացքում»՝ ներկայացված «ՀՀ ԳԱԱ հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ-ի կողմից,
2. Հայկական ԱԷԿ-ում ծանր վթարի հետևանքների մեղմման կարողությունները և դրանց ընդլայնման հնարավորություններ:

Ջրային ոլորտ

3. ՀՀ պետական սեփականություն հանդիսացող ջրատնտեսական համակարգերի, այդ թվում՝ խմելու ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման ջրի մատակարարման համակարգերի, հիդրոտեխնիկական կառուցվածքների, կոլեկտորադրենաժային ցանցերի գույքագրման և գնահատման հայեցակարգի կազմման առանձնահատկություններն ու իրականացման ուղղությունները,
4. Չսպասարկվող բնակավայրերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման գործընթացում արդի տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները և դրանց ազդեցությունը ծառայությունների մատուցման որակի բարելավման ու սակագների նվազեցման վրա,
5. Մշակել տարբերակված (բլոկային) սակագնային համակարգի մեթոդաբանություն և ոռոգման ջրի որակի նորմաներ,
6. Բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը վարարումների և սեփականության ռիսկից պաշտպանելու, օպերատիվ տեղեկատվության ներկայացման, անկանխատեսելի վթարներին արագ արձագանքման գործողությունների իրականացման նպատակով ծրագրի մշակում և քարտեզների կազմում:

Ճանապարհաշինության ոլորտ

7. Ճանապարհաշինության արդիականացման նպատակով ժամանակակից նոր «Սուպերփեյվ» (Superpave) տեխնոլոգիայի ներդրում:

Տարածքային կառավարման ոլորտ

8. Տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում և դրանց հաղթահարման այլընտրանքային ուղիները,
9. ՀՀ մարզերի ներդրումային գրավչության բարձրացման ուղիները,
10. ՀՀ սահմանամերձ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակում,
11. ՀՀ-ում համայնքային ծառայողի սոցիալական երաշխիքների ինստիտուտի կայացման անհրաժեշտությունը և հիմնահարցի լուծման ուղիները,
12. ՀՀ-ում համայնքային ծառայության արդիականացումը լավագույն միջազգային փորձի համեմատական վերլուծության ներդրմամբ:

Հանրարդյունաբերության ոլորտ

13. Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների դասակարգումների Արևմտյան և Հայաստանի Հանրապետության մոդելների ներդաշնակեցում,
14. Պոչամբարների և արտադրական լցակույտերի որպես տեխնածին հանքավայրեր դիտարկելու, դրանց ուսումնասիրություն և արդյունաբերական նշանակության բացահայտում,
15. Ուղեկից բաղադրիչների գնահատման նպատակահարմարության և ուսումնասիրմանը ներկայացվող պահանջների սահմանում,
16. Ոչ մետաղական հանքավայրերի օպտիմալ արտադրողականության հիմնավորում,
17. Բնօգտագործման վճարը ռոյալթիի կամ մարվող պաշարներից հաշվարկման նպատակահարմարության հիմնավորում,
18. Մետալուրգիական գործարանի ստեղծման նպատակահարմարության հիմնավորում և հումքային հենքի գնահատում,
19. Երկրաջերմային էներգիայի յուրացման նպատակահարմարությունը և զարգացման հեռանկարները Հայաստանում,
20. ՀՀ հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրի և պաշարների պետական հաշվեշուկի թվային բազային հենքի և դրանց հետագա վարման, թարմացման ավտոմատ կառավարման երկրաբանական տեղեկատվական համակարգի մշակում և գործարկում,
21. ՀՀ երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների թվային (վեկտորային) մոդելի (քարտեզի) ստեղծում, որը կներառի նաև 1:200000, 1:50000 և 1:25000 մասշտաբների երկրաբանական քարտեզների թարմացում, ճշգրտում և թվայնացում,
22. Երկրաբանական ֆոնդում հաշվառվող տեղեկատվության կատալոգի թվային հենքի մշակում և ավտոմատ կառավարման համակարգի ստեղծում, հետագա ավտոմատ թարմացման և կառավարման նպատակներով,
23. Երկրաբանական ֆոնդերի պահպանման, կառավարման և կարողությունների զարգացման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում և տեղայնացում:

« առողջապահության նախարարություն

1. «-ում հանրային առողջապահական տարատեսակ ծրագրերի, այդ թվում քաղցկեղի սքրինինգային ծրագրերի ճիշտ մշակման և կազմակերպման նպատակով « բնակչության շրջանում քաղցկեղի զարգացման ռիսկի գործոնների հաշվիչ/պլատֆորմ, որը մուտքագրվող տվյալների և ներկառուցված ցուցանիշների/արժեքների համաձայն կհաշվարկի որևէ քաղաքացու մոտ քաղցկեղ ունենալու ռիսկի հավանականությունը՝ հաշվի առնելով քաղաքացու տարիքը, սեռը, վնասակար սովորույթները, սննդակարգը, բնակության վայրը, ֆիզիկական ակտիվությունը, մասնագիտացումը, աշխատանքի բնույթն ու ստաժը, բնակության տարածաշրջանի էկոլոգիական ու քիմիական առանձնահատկությունները և այլն,
2. Առողջապահական էլեկտրոնային տեղեկատվական համակարգերում (ներհիվանդանոցային և համապետական) արհեստական բանականությամբ հագեցած գործիքների ներմուծում և կիրառում, որոնք կբարելավեն բուժօգնության որակի կառավարումը, կնպաստեն բուժօգնության ստանդարտացմանն ու սխալների կանխմանը, հիմքեր կստեղծեն պերսոնալիզացված բուժօգնության համար,
3. Կենսանմուշների արխիվի/բանկի կազմակերպման, կառավարման և վարման համակարգի նախագծում և մշակում ավտոմատացված ու ռոբոտային խելացի/սմարթ լուծումներով,
4. Հղի կանանց մոտ քրոնիկ HBV-վարակի ուսումնասիրություն, վիրուսային բեռնվածության, HBeAg հետազոտություն և կանխարգելիչ հակավիրուսային բուժման անհրաժեշտության ուսումնասիրություն, որպես կարևոր ռազմավարություն հեպատիտ Բ-ի էլիմինացիայի (վերացման) 2030 թվականին հասնելու համար,
5. COVID-19-ի տարածվածությունը, ընթացքի առանձնահատկությունները, երկարատև ազդեցությունը, ելքը քրոնիկ HBV- և HCV-վարակով, ՄԻԱՎ-վարակով պացիենտների շրջանում,
6. Հայաստանի Հանրապետությունում պատշաճ դեղատնային գործունեության համակարգի ներդրման մեխանիզմների գիտական հիմնավորումների մշակումը,
7. Դեղագործական ապրանքագիտություն և պատշաճ բաշխման գործունեություն: